**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 12-ը հուլիսի 2019թ.
ժամը՝ 11.00

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝***

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,

***Հանձնաժողովի քարտուղար՝***

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

***Բացակայում է հանձնաժողովի անդամ՝*** ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

**15.07.2019թ., *ժամը* 14:00-ին** կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «Արփիմեդ» ՍՊԸ |
| 2. | «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ |
| 3. | «Ջեռտա» ՍՊԸ |
| 4. | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| 5. | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ |
| 6. | «Նատալի ֆարմ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» *ծածկագրով* գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), ***բացառությամբ հետևյալ դեպքերի.***

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ ընկերության տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրության վավերականության հետ առկա են խնդիրներ և որպես ստորագրության ամսաթիվ նշված է **31.07.2019թ.,** այն դեպքում, որ, ըստ «ARMEPS» համակարգի տվյալների, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային հայտը ներկայացվել է 12.07.2019թ.:

Հաշվի առնելով վերագրյալը, հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և վերը նշված խնդրի լուծման համար դիմել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին՝ ստուգելու «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաստաթղթերը և պարզաբանում տալ արդյո՞ք տվյալ էլեկտրոնային ստորագրությունը կարող է գնահատվել վավերական և հիմք հանդիսանալ կողմերի միջև իրավահարաբերությունների առաջացման համար և նիստ հրավիրել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը ստանալու հաջորդ աշխատանքային օրը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ստացված պարզաբանումը հանձնաժողովի կողմից գնահատելու հաջորդ աշխատանքային օրը: ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Գ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մաղաքյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 19-ը հուլիսի 2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝***

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

***գնահատողներ՝***

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,

***Հանձնաժողովի քարտուղար՝***

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

***Բացակայում է հանձնաժողովի անդամ՝*** ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

---

(Ա. Մաղաքյան)

1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ստացված պարզաբանման քննարկման վերաբերյալ.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

1. ***<u>«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ստացված պարզաբանման քննարկման վերաբերյալ.</u>***

(Ա. Մաղաքյան)

1.Հիմք ընդունելով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից gnumner.am էլեկտրոնային փոստի հասցեին 19.07.2019թ. ստացված պարզաբանումը հետևյալ բովանդակությամբ՝ «Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 16-ի ՊՆ/02/1223-2019 գրության, հայտնում ենք, որ գրությանը կից ներկայացված «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված «Հավելված 1», «Հավելված 2», «Հավելված 2.1», «Հավելված 3» և «Հավելված 5», փաստաթղթերում Գ. Ալեքսանյանի ստորագրությունը՝ ըստ ստորագրության ժամադրոշմի դրված է եղել ապագա ժամանակով՝ **2019թ.07.31-ին,** որը դրվել է ստորագրողի համակարգչի ժամին համապատասխան: Նշվածը հիմք է հանդիսանում ստորագրությունը անվավեր ճանաչելու և, հետևաբար, այն հիմք չի կարող հանդիսանալ կողմերի միջև իրավահարաբերությունների առաջացման պատճառ: Հարկ ենք համարում նաև նշել, որ նույն ընկերության կողմից ստորագրված «Հավելված 4» Գ. Ալեքսանյանի ստորագրությունը՝ ըստ ստորագրության ժամադրոշի դրված է եղել 2019թ.07.12-ին և համապատասխանում է վավերականության պայմաններին:

2.Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ստացված պարզաբանումը որոշեց «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել (մասնավորապես) կազմակերպության տնօրենի էլեկտրոնային ստորագրությունը ըստ վերը նշված պարզաբանման հավելվածներ՝ «Հավելված 1», «Հավելված 2», «Հավելված 2.1», «Հավելված 3» և «Հավելված 5» չեն համապատասխանում դրա համար սահմանված պայմաններին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

***<u>2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.</u>***

2. Քանի որ «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 5-րդ, 10-րդ և 17-րդ չափաբաժինների մասով Ձեր կողմից առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, իսկ 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 27-րդ, 42-րդ, 46-րդ, 54-րդ, 58-րդ, 60-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովի որոշել է գների նվազեցման նպատակով **24.07.2019թ. ժամը 11:15-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը,, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Գ. Անտոնյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 24-ը հուլիսի 2019թ.
*ժամը՝ 11:15*

Մասնակցում էին՝

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան

**Հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

**Բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ՝** ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը, իսկ նիստը նախագահում էր հանձնաժողովի անդամ՝ **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը:**

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

**Մասնակիցների գնային առաջարկները Տես՝ արձանագրությանը կից Հավելված 1-ում:**

**«Արփիմեդ» ՍՊԸ-ի** *կողմից ներկայացված գնային առաջարկը 34-րդ չափաբաժնի մասով, նշված արձանագրությանը կից Հավելված 1-ում չի ներառվել, քանի որ չէր համապատասխանում ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:*

3.2 Մասնակիցների առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.***

**«Արփիմեդ» ՍՊԸ-ի** կողմից 34-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ N5 հավելվածում սխալ էր կատարված «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում լրացված գումարների հաշվարկը: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց **34-րդ չափաբաժնի մասով մերժել «Արփիմեդ» ՍՊԸ-ի հայտը:**

Ըստ ներկայացված տվյալների մասնակիցները ԱԱՀ վճարող են:

3.3 Քանի որ «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի 2-րդ, 5-րդ, 10-րդ և 17-րդ չափաբաժինների մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, իսկ 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 27-րդ, 42-րդ, 46-րդ, 54-րդ, 58-րդ, 60-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովի որոշել է գների նվազեցման նպատակով **24.07.2019թ. ժամը 11:15**-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ, բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ («Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Ջետտա», «Նատալի Ֆարմ» «Արփիմեդ», «Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ-ների) և նիստը շարունակել այդ օրը:

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | Նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) neostigmine (neostigmine methylsulfate) | հատ | 1,100 | 44,660 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 44 | Ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) phenylephrine (phenylephrine hydrochloride) | հատ | 160 | 14,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 45 | Սեխածառի չորացրած կաթնահյութ latex exsicco papayaeae | հատ | 500 | 714,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 46 | Ֆենազեպամ phenazepam | հատ | 960 | 10,752 | 1 | «Արփիմեդ» ՓԲԸ | 6,640 | 1,328 | 7,968 | «Արփիմեդ» ՓԲԸ |
| 47 | Քլորդիազեպօքսիդ chlordiazepoxide | հատ | 300 | 11,400 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 48 | Պրեգաբալին pregabalin | հատ | 500 | 151,800 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 49 | Դինատրիումի ադենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբօքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ disodium adenosine triphosphate trihydrate, cocarboxylase, cyanocobalamin, nicotinamide | հատ | 200 | 310,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 50 | Արիպիպրազոլ aripiprazole | հատ | 800 | 345,600 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 51 | Արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից, hemodialysate protein-free from calves blood | հատ | 2,000 | 1,664,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 52 | Արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից, hemodialysate protein-free from calves' blood | հատ | 1,600 | 1,792,320 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 53 | Արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից hemodialysate protein- free from calves' blood | հատ | 600 | 51,300 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 54 | Կլոզապին clozapine | հատ | 1,500 | 82,050 | 1 | «Արփիմեդ» ՓԲԸ | 41,250 | 8,250 | 49,500 | «Արփիմեդ» ՓԲԸ |
| 55 | Ադեմետիոնին ademetionine | հատ | 400 | 1,198,480 | 1 | «Ջեստա» ՍՊԸ | 1,330,000 | 266,000 | 1,596,000 | |
| | | | | | 2 | «Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ | 935,306.67 | 187,061.33 | 1,122,368.00 | «Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ |
| 56 | Ադեմետիոնին ademetionine | հատ | 200 | 145,080 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 57 | Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ,lyophilized viable lactic acid bacterias | հատ | 20,000 | 2,356,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 58 | Պեպտիդներ խոզի գլխուղեղից, porcine brain peptides | հատ | 200 | 453,720 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 368,333.333 | 73,666.667 | 442,000 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 59 | Բորաթթու, կապարի ացետատ, նատրիումի տետրաբորատ, տալկ, սալիցիլաթթու, ցինկի օքսիդ, անանուխի յուղ, | հատ | 1,600 | 11,040 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 60 | Դեքսմեդետոմիդին (դեքսմեդետոմիդինի հիդրոքլորիդ) dexmedetomidine (dexmedetomidine hydrochloride) | հատ | 350 | 4,410,000 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 3,616,666.667 | 723,333.333 | 4,340,000 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 61 | Երկաթսախարոզային համալիր Iron sucrose complex | հատ | 500 | 1,750,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 62 | Ացետիլցիստեին acetylcysteine | հատ | 2,500 | 1,840,000 | 1 | «Ջեստա» ՍՊԸ | 1,497,916.67 | 299,583.33 | 1,797,500.00 | |
| | | | | | 2 | «Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ | 977,520.83 | 195,504.17 | 1,173,025.00 | «Ռիխտեր Լամբրոն ՀՁ» ՍՊԸ |
| 63 | Էպոետին բետա epoetin beta | հատ | 50 | 765,600 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 64 | Բիսակոդիլ bisacodyl | հատ | 4,000 | 224,400 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 165,333.333 | 33,066.667 | 198,400 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 65 | Գրանիսետրոն (գրանիսետրոնի հիդրոքլորիդ) granisetron (granisetron hydrochloride) | հատ | 400 | 1,008,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 66 | 1(A) փաթեթ - եգիպտացորենի մալթոդեքստրին- 1900մգ,լակտոբացիլուս ռամնոսուս-100մգ, 2(B) փաթեթ-Նատրիումի քլորիդ-360մգ, կալիումի քլորիդ-300մգ, նատրիումի ցիտրատ-580մգ, գլյուկոզա-3020մգ, սուկրալոզա-10մգ,կրեմնիի երկօքսիդ-10մգ,ելակի համով արոմատիզատոր-120մգ,դեղամևը՝ դեղափոշի դեղաչափված փաթեթիկներ | հատ | 400 | 313,600 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 256,666.667 | 51,333.333 | 308,000 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 67 | Բիլաստին bilastin | հատ | 3,000 | 726,000 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 438,950 | 87,790 | 526,740 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 68 | Ռիվարօքսաբան rivaroxaban | հատ | 1,000 | 1,463,000 | 1 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | 974,858.333 | 194,971.667 | 1,169,830 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 69 | Ֆիտոմենադիոն phytomenadione | հատ | 500 | 791,000 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |
| 70 | Լևետիրացետամ levetiracetam | հատ | 250 | 80,250 | | | | | | Գնային առաջարկի բացակայություն |

«Արփիմեդ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված գնային առաջարկը 34-րդ չափաբաժնի մասով, Հավելված 1-ում չի ներառվել, քանի որ չէր համապատասխանում ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

Վերը ներկայացված են մասնակիցների գները բանակցության արդյունքում, ընդ որում «Նատալի ֆարմա» ՍՊԸ-ն 17-րդ չափաբաժնի մասով առաջարկված ընդամենը գինը՝ ԱԱՀ-ով 194,400 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ՝ 162,000 ՀՀ դրամ, համաձայնվեց նվազեցնել սահմանելով ԱԱՀ-ով 186,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ 155,000 ՀՀ դրամ, մնացած չափաբաժինների մասով գները չնվազեցվեցին և դրանք թողնվեցին առանց փոփոխության:

Գնահատող(ԳԱՊ) Վ. Վահանյան

Գնահատող Գ. Անտոնյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Մաղաքյան

**24.07.2019թ. ժամը 11:15-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին ներկայացավ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի լիազորված անձը և 17-րդ չափաբաժնի մասով առաջարկված ընդամենը գինը՝ ԱԱՀ-ով 194,400 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ՝ 162,000 ՀՀ դրամ, համաձայնվեց նվազեցնել սահմանելով ԱԱՀ-ով 186,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ 155,000 ՀՀ դրամ, մնացած չափաբաժինների մասով գները չնվազեցվեցին և դրանք թողնվեցին առանց փոփոխության:

Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 3-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ, 31-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 56-րդ, 57-րդ, 59-րդ, 61-րդ, 63-րդ, 65-րդ, 69-րդ, 70-րդ, չափաբաժինների մասով հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 2-րդ, 5-րդ, 10-րդ և 34-րդ չափաբաժինների մասով՝ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

4.1 **24.07.2019թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները. ***տես Հավելված N1:*** Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, **ՀՀ ՊՆ** նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Վ. Վահանյան |
| Գնահատող | Գ. Անտոնյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |